1024. ԹՎ.ԻՆ :ՈԳ: (1054). ԱՆՈՒԱՄԲՆ ԱԾ. ԵՍ ՄԱՐԳԱՐԻՏ ԴՈՒՍՏՐ ՈՒԽՏԻԿԱՑ| ԿԱՆԿԵՑԻ ԶՍԲ. ՆՇԱՆՍ Ի ՓՐԿՈՒԹԻՆ. |ՀՈԳՈՑՆ ՎԱՐԴԻՄԲԵՐԻՆ ԵՒ ՎԱՐԴԱԽՈՐ|ԻՆ, ՄԽԻԹԱՐԱՑ ԵՒ ԿԱՆԱՆԻՆ. |ՈՐՔ ՅԱՂԱԻԹՍ ՅԻՇԷՔ՝ ԵՒ ՁԱՏ|ՈՄ ՈՐ ԳՈՐԾՈՂ ԷՐ ԽԱՉԻՍ:

Ծանոթ. *Խաչքարը տեղում չգտանք, բայց պատմության թանգարանի լուսանկարչական ապակիների մեջ գտանք նրա նկարը, որից և վերծանում ենք։ Հրատարակիչները թիվը նշանակել են ։ՌԴ։, սխալ են վերծանել նաև անձնանուններից երկուսը՝ ԶԱՐԴՄԲԵՐ եվ ԶԱՐԴԱԳՈՒՆ։ Հրատարակիչների այդ սխալները փոխանցվել են Հ. Աճառյանի Անձնանունների բառարանի և մեր՝ Միջնադարյան հայ ճարտարապետներ (էջ 189) աշխատությունների մեջ։ Խաչի վերին աջ անկյան մեջ փորագրված է ՊԱՏՐՈՆ, որից հետո հավանաբար ԵՀԱՆԷՍ։*

Հրատ. Բարխուդարեանց, 292, Լալաեան, V, 309—310։

Լուսանկ. 135.

Մլզնաբերդ կամ Մածնաբերդ վանք. *գտնվում է գյուղից հարավ-արևելք, մի բարձր գագաթի վրա. վանքի այժմյան շինությունները բոլորովին նոր են, այն «հիմնովին» նորոգել է Գանձակեցի Սողոմոն Նալղադարյանցը 1891 թ. (ըստ արձանագրության)։ Պատմական աղբյուրներում Մածնաբերդը հիշատակվում է որպես Կյուրիկյան Աղսարթանի նստոց*[1], *իսկ այստեղ գրված ձեռագրերի հիշատակարանները թվագրված են 1666 և 1668 թվականներով*[2]*։*

Եկեղեցու պատերի մեջ օգտագործված խաչքարերի վրա պահպանվել են՝

1025. :ՌԴ: (1555):

1026. :ՌՃԽԷ: (1698):

1027. :ՌՂ: (1641):

1028. ՇՊԱԹԻՆ . . . .

1029. ՍԲ. ԽԱՉՍ |ԲԱՐԷԽԱԻՍ| ՍԱՎԱՐԻ| ՀՈԳՈՅՆ| ԹՎ. :Ռ . . . . :

102. ՆՅՈՒԳԶԱՐ ԳՅՈՒՂ

Գյուղամ հին արձանագրություններ ունեցող հուշարձանները հետևյալներն են.

Ա. Մատուռ. *գտնվում է գյուղի մեջ, ս. Գևորգ եկեղեցուց քիչ հեռու. հասարակ քարերով կառուցված և փայտածածկ շենք է։ Բեմի ճակատին դրված են հին խաչքարեր, իսկ կողքին եղել է գերեզմանաքար՝ :ՉԽԷ: թվականով։*

Բ. Ամենափրկիչ վանք. *գտնվում է գյուղի հարավարևմտյան կողմում, Շամքոր գետին մոտ. ունեցել է նաև գավիթ. դեռևս Բարխուդարյանցի այցելած ժամանակ կիսավեր է եղել։*

1030. ***ՏԱՊԱՆԱՔԱՐԻ ՎՐԱ,*** *որը գտնվելիս է եղել մատուռի մոտ.*

Այս է հանգիստ Դւիգարոյ. թվին :ՉԽԷ: (1298):

Հրատ. Բարխուդարեանց, 294։

1031. ***ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔԻ*** *գավթի ծեփի վրա.*

Շնորհօքն Քրիստոսի և կամաւն Ած. ես Դաւիթ եպիսկոպոս նորոգեցի զեկեղեցիս այս յիշատակ ինձ և ծնողաց, Բաղդասարին . . . . թվ. :ՌՃԻԸ: (1679):

Հրատ. Լալաեան, V, 346։ Բարխուդարեանց, 295 (սղումներով)։

---

[1] Կիրակոս Գանձակեցի, *Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 153։*

[2] Բարխուդարեանց, *Արցախ, էջ 43 և 45։*

1032. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔԻ ըեմի առաջ դրված մի մեծ խաչքարի վրա.

Ի հայրապետութեան Ագուանից տն. տն. Տրդատայ սբ կաթողիկոսի, թագաւորութեան պարսից Շահաբազին, ես մեղապարտս · · · որդիս իմ Մսղամիա եպիսկոպոսն · · · նորոգեցաք ս. Ամենափրկիչս:

Հրատ. Լալաեան, V, 346.